

անգամ փոխարինելով բայերին: Եվ պետք է նշել, որ մեր հին լեզվում բայաճյուղների համար նույնքան սովորական էր նախդիրներով և նախադրություններով լրացումներ անել, որքան առանց դրանց: Այնպես որ այստեղ օտար ազդեցության մասին խոսք չի եղել չի կարող: Գրաբարից է գալիս նաև նույն արմատից կազմված բայն և բայանվան՝ տարբեր հոլովներով խնդիր անելով (բամբակենու ծերատում, ծերատել բամբակենին) և այլն: Այս կապակցությամբ նշե՞մք նաև, որ աշխատությունում բերի է բազմաբայությամբ բայանուն գոյականների հոլովառության ցանկը:

Հեղինակի կազմած ցանկերը, որ—+ներով առատաքանությամբ են այս կամ այն ձևով լրա-

ցումներ անելը կամ չառնելը, միշտ չէ, որ նիշտ են: Ինչպես աշխատությունում է առանձնապես նշվում, կառավարման համար նշանակություն ունի կառավարող բառի բազմաբայությունն ու իմաստների փոփոխությունը, ուրեմն—+ները նշանակելիս այս հանգամանքն անպայման պետք էր նաշվի առնել:

Այլ բերություններ ևս կարելի է նշել, սակայն բավարարվեն այստեղով և նորից ասենք, որ Հ. Հարությունյանի «Կառավարումը ժամանակակից հայերենում» մեծագրությունը հետաքրքիր աշխատանք է և լուրջ ներդրում շահագործության ուսումնասիրության բնագավառում:

Է. ՄԿՐՏՁՅԱՆ

Ժ. ՔԱՆԱԹԱՐՅԱՆ, Գրական ֆենադատության տեսության և պատմության հարցեր, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1983, 240 էջ

Վերջին երեք տասնամյակում հայ գրականագիտական և ֆենադատական միտքը հասավ ափնայտ նվաճումների: 50-ականի սկզբներից սկսված քննադատական շարժումը ստեղծեց անհրաժեշտ ավանդույթներ, ստեղծագործական իմաստով կենսական մթնոլորտ: Հայտնի էրիս տասնամյակներում ավագներին միացան նաև նուրբագույները, որոնք լայնացրին հին ու նոր արժեքների գնահատման հնարավորությունների տեսողաշարը: Հայ ֆենադատն ու գրականագետը մեր գեղագիտական, տեսական մտքի հեղինակությունը մեծացնելով դուրս եկան միջազգային ճանապարհ: Սա, ինչ խոսք, պատվարի է և, անշուշտ, ուրախալի է, որ այս առգաղափար շարժմանը իրենց հանդես են բերում համեմատաբար երիտասարդները:

Նորերից Ժ. Փայնթարյանը, որը վերջին մեկուկես տասնամյակում հանդես էր եկել տասնյակ հոդվածներով՝ նվիրված արդի հայ արձակի, պոեզիայի և հին ու նոր ֆենադատության մի շարք էական պարզմաններին, կուտակել ուրախ փորձ, նախնա է եկել իր տեսակի մեջ մի ինքնատիպ ուսումնասիրության՝ «Գրական ֆենադատության պատմության և տեսության հարցեր»: Առում ենք՝ ինքնատիպ, քանի որ նման բնույթի աշխատանքները նախորդում է մեզանում: Անհանկուտ բոլոր չքով և՛ ուսու, և՛ հայ, և՛ Միության ուրիշ ազգերի տեսաբանները բազմաթիվ հոդվածներ են գրել ֆենադատության դերի, նրա գրական տեղի, միտումների ու հարակից հարցերի մասին, բայց առանձին մեծագրություն ստեղծվածներում վերահիշյալ հարցերը չեն ֆենադատ:

Գիրն այս իմաստով առաջնեկ է և իր բովանդակությամբ բավականին հարուստ է ու տարազան: Այստեղ գիտական լրջմտությամբ ֆենադատ են տարատեսակ հարցեր: Ամեն դեպ-

ում հեղինակը իր հետազոտությունն սկսում է սովորական հարցադրման պատմությունից, որից առնում է էական, ողջամիտ փաստեր, արժեքավորում դրանք, ստեղծում գիտականորեն համոզիչ եզրակացությունների շղթաներ: Շատ էական է այս իմաստով ֆենադատության գիտական իմաստի և դրա պատմականության ըմբռնումը: Վկայակոչելով հունական, եվրոպական, ռուսական և մեր գեղարվեստական-գեղագիտական մտքի մի շարք պրեդիկտայն փաստեր՝ գրականագետը «մեռյալ» քվադրա էլուսից անում է հետևյալ եզրակացությունը. «Ֆենադատության գաղափարն անհանկուտ շրջանում գրականությունն իր մեջ ներառում էր ֆենադատությունը, բայց հետո գրականությունը դասաց-կամաց գաղափարով ֆենադատության տարրերից, դարձավ վերջինիս հետազոտության առարկան»: Մեր և ուրիշների դարերի փորձը հենց սա է ճշատա-

տում: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ գլխավոր հարցին դառնալուց կամ դա նախապատրաստելուց առաջ, Փայնթարյանը ֆենադատության՝ որպես ինքնուրույն գիտության, իրականի և պատկեր է պայտալանում: Ապա, դառնալով վերջին՝ 70—80-ական թթ. միութենական մամուլում ծավալված բանավեճերին, որի անհամապի ընթացի դեմ նախորդ գլխում արդեն իսկ հայտնել էր իր անբավականությունը, հեղինակը անհրաժեշտ բանիմացությամբ ֆենում է քննադատությունը գրականության հարցը, մի պարզեմ, որի շուրջը մինչև օրս էլ լուրջ վեճ է գնում:

Հարցի մեկնության մեջ թերևս ավելի մոլորանողը Բուրսովն է, որը ֆենադատությունն անվերապահորեն մտցնում է գեղագիտականության ոլորտը և չի ուզում ընդունել ոչ մի ա-

որակայում: Բավականին լրջմիտ ձևով գնահատելով այս ճեղհակի «Բննադատությունը գրականություն է» գիրքը, Քալանթարյանը գիտական տրամաբանությանը բնորոշ չի համարում նրա դրույթները: Մասնավորապես վիճելի է Բուրսովի այն պնդումը, թե բննադատությունը կարող է նպաստել գրականությանը, եթե ինքը հանդես գա որպես գրականություն: Այս հարցադրումն ընդունելի է միայն այն դեպքում, երբ գրողն ինքն է գրողվում բննադատությամբ: Իրևն դրա արդարացում և հիմնավորում Քալանթարյանը վկայակազում է ուսական ու հայկական գրողական թննադատության տասնյակ փաստեր և ընդհանրացնում, որ, ասենք՝ Պուշկինի, Տոլստոյի, Գոթի, Քումանյանի, Շիրվանզադեի, Տերյանի, Աևակի, ուրիշ մեծերի տեսական-ծրագրային բնույթի հողվածները մեծագույն չափով նպաստել են բուն բննադատության գուրգացմանը: Այդ կարգի մարդիկ ղեկավարել էն իրենց ժամանակի գեղագիտական միտքը, ճշկել նաշակը, բարձրացրել իրենց գրական մեթոդի և դարձրեցների հեղինակությունը:

Այնուամենայնիվ, ինչ-որ հատկանիշներով ուրիշ է պրոֆեսիոնալ բննադատության ընթացքը, զերև ու պատմությունը: Որովհետև, շարունակում է մտորել Քալանթարյանը, «ուզենք թե չուզենք, գրողական բննադատությունն ունի շատ որոշակի սուբյեկտիվ բնույթ: ... Անգամ ուրիշի մասին գրած հողվածներում գրողը պաշտպանում է իր ուղղությունը, իր գաղափարները, իր գեղագիտական փորձը»: Իսկ բննադատը:

Այս դեպքում դարձյալ պետք է համաձայնել հեղինակի նետ. պրոֆեսիոնալ բննադատը պարտավոր է իր տեսադաշտում պահել գրական ողջ համապատկերը: Դրանովն ուրույն նաշակ ու նախասիրություն՝ բննադատը ելնում է ստեղծագործական ընդհանուր շահերից, միտումներից և ուղղություններից: Թեև այս ընթացում, ընդգծում է Քալանթարյանը, գրականության պատմաբանի համեմատությամբ նա որոշ չափով սուբյեկտիվ է, բայց դա արդեն պատճառաբանվում է բուն գրական կյանքի և առօրյա բննադատության ուղղակի կապով: Այսպիսի սուբյեկտիվիզմը վտանգավոր չէ: Այս առումով կարծում ենք, որ բունգրաստիկ չէ լինի նետույթը բնութագրությունը. եթե *գրողական թննադատությունը նշանակալից չափով սուբյեկտիվի սուբյեկտիվությունն է, ապա մասնագիտական թննադատությունը՝ օբյեկտիվի սուբյեկտիվությունը*:

Եվ, այնուամենայնիվ, ինչպիսիքն է վիճակը մեզանում: Հայ գրականագետներն ու բննադատները վերջին շրջանում նույնպես գործուն մասնակցեցին հարցի միտքեզական խոսակցությանը: Թվում է, որ մեզանում վեճը այնքան էլ ծայրահեղություններ չհասավ: Եղած տեսակետները խոր հակասություններ չունեն, վտանգավոր չափով խզված չեն: Անա Քալանթարյանը ի մի բե-

րելով եղած բննադատական երևույթները, կարողացել է ստեղծել մեր փորձի տեսությունը: Դառնանք մի քանի փաստերի: Գրավոր առույթի ընթացում էր. Ջրբաշյանը շատ հստակ է դնում իր տեսակետը, վկայակազելով Եվրոպական (Իդրոս, Լեսինգ), ուսական (Բելլեսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով), հայկական (Լալբանդյան) բննադատության փորձը, գրականագետը ավելացնում է, որ նրանք «բննադատությունը վերածեցին գիտության, որը նեկվում է գեղարվեստական որոշակի սկզբունքների և չափանիշների վրա»:

Քալանթարյանը առանձնացնում է նաև Հր. Քամրազյանի յուրատեսակ կարծիքը, ըստ որի բննադատության գիտականության կշիռը գուրգացվում է արվեստի հատկանիշներին: Դա է հաստատում նաև Երեւո լույս տեսած նրա «Հայ բննադատություն», հ. Ա մեծարժեք գիրքը: Այս պարագայում առավել կտրուկ է նկչում Ս. Սարինյանի խոսքը: Նա բննադատության կենսական տարածության ոլորտներում մագաչակ անգամ տեղ չի հատկացնում գրականության համար: «Իմ համոզմամբ,— գրում է նա,— բննադատությունը գիտություն է, այլև պատմական գիտություն է»: Համեմատաբար երիտասարդներից խոսակցությանը մասնակցել են Գ. Ավետիսյանը, Ա. Եղիազարյանը, Դ. Գասպարյանը: Քալանթարյանը համախմբում է նրանց տեսակետները, ստեղծում բննադատության տեսության նետ կապված ընդհանրական ու մասնավոր պրոբլեմները:

Գիտական ընդհանրացումների համար հեղինակը շատ շանք է քափում՝ իր խոսքը առավել հիմնավոր դարձնելու համար: *Բննադատությունը գրականությունն տեսությունն է բուն արվեստի եռաստիճան զուգահեռում նա մթերում է տասնյակ հեղինակների (Իվանով, Կուզնեցով, Բուշմեյն, Ասաթիանի, Պ. Աևակ, Պոկինի, ուրիշներ) տարսետ կարծիքները, հեղինակը դրանք խմբավորում է երեք օղակում, բնութագրում առանձին-առանձին: Այնուհետև գիտական ողջամտությամբ շարադրում իր տեսակետը, որը և առնչվում է հայ արդի գրականագետների որոշ մասի կարծիքների նետ, և դրևորում է ինքնատիպ ճեղհություն: Նա բննադատությունն աղատում է գրականության «սպասյակի» դերից, հողհոր խեղճությունից, արվեստին բնորոշ տարերի գրոհից, նրա ավելորդ լինելու անփույթ մեղադրանքից: Եթե բննադատությունը արվեստի երկվորյակն է կամ կցորդը, ապա «ի՞նչ իրավունքով մի արվեստը պետք է դատի մյուս արվեստի մասին, ի՞նչ չափանիշներով»,— իրավագիտորեն բողոքում է գրականագետը: Ապա՝ *Եվ անկախ այն բանից... թե բննադատությունն արվեստ համարողները... ընդունում են նաև բննադատության գիտություն լինելը, եթե նրանք չեղյոր դնում են արվեստի հատկանիշների վրա,**

ապա ետին պլան են մղում և կամ ուղղակի մերժում են քննադատության գիտականությունը և գնահատման հիմնական դերը» (ընդգծ. «Ներհեակիեն է— Ս. Ա.): Մտառումների և ուշագրավ, գիտական դատադրությունների այս հասանքի մեջ Քալանթարյանը, իր խոսքը համազոր դարձնելու նամար, ստիպված դիմում է առաջին հայացքից զավեշտական թվացող վկայակցումների: Նա գում է «Երբ գրողը բնագրային պահանջում է գրել գրողի նման, ապա նույնքան իրավացի կլինե՞ր գրողից պահանջել, որ նա անի այն, ինչ անում են իր պատկերած հերոսները՝ այսինքն թանկագործի նման աշխատի հանձնում, կեղծ նման երեխա ծնի, վիրաբույժի պես վիրահատություն կատարի, այլպես նա ի՞նչ իրավունք ունի խոսելու մայրացող կեղծ կամ վիրահատություն կատարող բժշկի ապրումների մասին»: Եվ ապա՝ «Արդյա՞հ բալետային ներկայացման մասին գրող արվեստագետը պետք է բալետի արտիստների պես կախվել իմանա կամ լավ երաժշտագետը պետք է երգի օպերային աստղերի պես»:

Ինչպես տեսնում ենք՝ նման պահանջը կարող է հանգեցնել անեթերություն: Այսպես գրականագետը հետևողականորեն մերժում է «աչ» ու «ձախ» մոլորությունները, հերժում-հաստատում է շատ բան: Այս ընթացքում նա խոսքը չի բերում ոչ մի կեղծ երանգ, հավակնություն: Մտերի հոսքը նա առաջ է բերում քնական հունով և հասնում գիտական օրոշակիության՝ մասնակի ընդհանրացումներից հասնելով էականին: Ժ. Քալանթարյանը իրավացի է, երբ բնագրատուները համարելով գիտություն, նա ինչ-որ հանգույցում տեղ է բացում գրականության համար՝ հուզական, հրատարակախոսական տարրերի առկայության իմաստով: Իրոք, հիլիեզու հայտնի դրույթը, թե «բնագրատուները քայլով էսթետիկա է», մեծ ժամանակների համար բանաձևային նշանակություն է ստացել: *Գիտություն—գեղագիտություն* հարաբերության մեջ գեղեցիկի շունչը մասնակի չափով բնագրատույանը տրամադրում է արվեստի բաժին:

Բայց, անհ, հենց այս պարագան էլ շարաշահվել է մեզանում և այլուր: Քննադատության պրոֆեսիոնալ փորձ չունեցող և զուտ գրական շատ ու ի՞չ ընկալումներ ունեցող մարդիկ գրել ու գում են գրախոսություններ, մեկնում գրական հաստիստների գրքեր՝ էժանգսման վտանգի տակ դեմով բուն գիտության շահերն ու սանձանքները: Գաղտնիք չէ, որ այսօր բանաստեղծներն ու արձակագիրները (հատկապես երիտասարդները) ավելի շատ են հուզվածներ գում, քան կոչումով այդ գործի համար ծնված մարդիկ: Այդ իմաստով, այսօրվա գրական շարժման մեջ ուրույն բացառություն են կազմում Վ. Դավթյանը, Վ. Պետրոսյանը, Հր. Մաթևոսյանը,

Ս. Աղայանը, Ռ. Դավթյանը և էլի մի քանի գրողներ:

Հետագա էջերում Ժ. Քալանթարյանը դառնում է մի ուրիշ «չարչարված» հարցի. ի՞նչ տեղ է գրադեցնում բնագրատուները, դրկից գիտությունների՝ գրականության պատմության և տեսության տարածում:

Իհարկե, նրանց երեքի հետազոտության առարկան նույնն է, բայց նրանցից մեկը զբաղվում է գրական անցյալ փաստերի համակարգումով ու մեկնաբանությամբ, մյուսն ի մի է բերում հին ու նոր արժեքների ընդհանուր ու մասնավոր փորձի գեղագիտությունը, իսկ երեսնագրատուները գերազանցապես ընթացիկ գրականության գործընկերն է: Կարելի է սասլի՛ բնագրատուները կեղծակեր, ծավալվող գրականության գրականագիտությունն է: Քեկ, ինչպես նշում է հեղինակը, բացառված չեն դրանց փոխներթափանցումները: Այս իմաստով բերես, ավելի ժաշան է բնագրատուները, քան որ հարկ եղած դեպքում դիմում է «յուրայիններին» փորձի՛ն՝ անվերջ մնում քայլով գեղագիտություն՝ դրանով իսկ կապ ստեղծելով անցյալի ու գալիքի միջև: Իսկ սա ինքնատիպ ու բացառիկ դեր է:

Այստեղ հարկ ենք համարում ուղղակիորեն մեջբերել Քալանթարյանի ընդհանրացումը: Հիշատակելով գրականագիտության մյուս նյութերի արտացոլման առանձնատկությունները՝ նա գում է. «Բնագրատուները բացահայտում է իր հետազոտության քննարկային գոյություն հիմքներն ու պատճառները, գոյանքի առանձնատկությունները, գորագման օրինաչափությունները, հետազոտության միտումները: Իսկ այդ ամենին բնագրատու հասնում է օրոշակի մեթոդի. կայուն օրենքներն ու հստակ առամարտության միջոցով»:

Հայտնի գլուխներում գրականագետը նույնպիսի գիտականությամբ բնութագում է բնագրատույան դարերի և ներկա փորձի մեթոդը, ժանրերը, կուսակում, հիշատակում է բազում փաստեր. կատարում արդյունավետ եզրակացություններ:

Ի վերջո Ժ. Քալանթարյանը համախմբում է իր ընդհանրացումները շրջաններ: Նա ընդգծում է, որ գիտական բնագրատույունն ունի ներքին անհրաժեշտության իր օրենքները՝ մեթոդը, ուրույն ժանրերը, նպատակը, դերը, որ նա հասարակական գիտություն է, արդիական թվացող՝ նա պատմական գիտություն է, այն փիլիսոփայական գիտակցությանն ձև է և այլն: Մրանք հարցեր են, օրնզգով բնագրատուները հարաբերական շիսմների մեջ է մտնում հասարակական մտածողության տարրեր յուրաների հետ, բայց չենեց այս լրացուցիչ հատկանիշներն էլ դառնում են տարրերակից գործնե՝ գրականագիտության մյուս նյութերի և բնագրատույան սահ-

մանե՛ր որոշե՛լիս»,— իմաստալից եզրակաց-
նում է այս հաջողված գրքի հեղինակը: Նույն
այդ սկզբունքներով էլ աշխատության հեղինակ-
ը վերջին գլուխներում արժեքավորում է Մ.
Նալբանդյանի և Դ. Դեմիրեյանի բնագրատա-
կան և գրականագիտական վաստակը:

Վերստին ընդգծե՛նք. Ժ. Քալեբթարյանի ներ-
կա աշխատությունը գրված է գիտականորեն՝
մտաշեղի և ոճի իմաստով՝ հստակ լեզվով: Այն

իմի է քերում կուտակված խայտաբղետ նյութը,
տարասն խոճերը, համախմբում է դրանք և,
նշմարիտ գիտության շահերից ելնելով, ստեղ-
ծում է բնագրատության տեսության յուրատե-
սակ համակարգ:

Սկսված է ազնիվ աշխատանք՝ հանուն գի-
տական բնագրատության հեղինակության: Հար-
կավոր է աչակցել...

Ս. ԱՔԱԼԲԱՆԿՅԱՆ

PARS TUĞLACI—Osmanlı Mimariğinde Batılılaşma Dönemi ve Balyan
Allesi, İstanbul, 1981 (İnkılâp ve Aka) s. 352, fot., gr., res.

Քուրբխյան աշխատած հայ նշանավոր ար-
վեստագետների գործին, մասնավորապես Պալ-
յանների կերած մանչելիքներին իրենց ուսում-
նափրություններում անգրագարանի են Արշակ
Չոպանյանը, Արմենակ Սազգյանը, Գառնիկ Ստե-
փանյանը և ուրիշներ, դրանց մասին հաճախ է
գրել պոլսահայ մամուլը, բայց վաղուց պահանջ
էր զգացվում մի ամբողջական երկասիրության,
ուր ամփոփված ու բնական լինեին Պալյանների
բոլոր ճուշարմանները:

1981 թ. Պոլսում քուրբեհե՛ն լեզվով լույս է
տեսել անվանի բառարանագիր և քուրբական
հանրագիտարանների կազմող Բարսեղ Քուրբաչ-
յանի (Բարս Քուրբաչը) «Սումանյան ճարտարա-
պետության արևմտահայեցման ժամանակաշր-
ջանը և Պալյան ընտանիքը» աշխատությունը:
Պոլսի XVIII—XIX դարերի փանի-բանի ճար-
տարապետական կորագներ են կերտել այս ըն-
տանիքի անդամները: Տյոզը ստրայ, Դոլմա
Բանչե, Լուսերթեյն մզկիթն ու պալատը, Չրա-
զանի, Գյոթու կամ Քյուլյուֆուս, Ինյամուրի,
Բեյլերթեյնի, Այազադի, Իզմիրի արևոնի պա-
լատներն ու այլ բազմաթիվ ճուշակապ շենքեր,
այսօր ճիշտում են գրաստչրիկներին և դեպի
Պոլիս ձգում նրանց: Այդ ճարտակերտները փայ-
լուն վկայությունն են Պալյանների կառուցողա-
կան հանճարի ու իրենց վրա են կրում նրանց
մտածողոշոյր:

Պալյաններին նվիրված ուսումնասիրությունն
սկսվում է օսմանյան կայսրության ներկայիս
տարածված ժամանակին աշխատած հայ ան-
վանի ճարտարապետների վաստակի բուցիցի
նկարագրմամբ: Նշվում են փառաբանված Տր-
դատ Անեզու, «Փռճա Սինանի» (Վարպետ Սի-
նոն), Եղիազար, Արգունան, Սարգիս, Եփրեմ,
Ավագ և շատ ուրիշ «հայկաների» (ճարտարա-
պետ) անունները, դեմքեր, որոնք բազմաթիվ
կարևոր ճուշարմաններ են կերտել սարքեր պա-
րբում: Վերջիններս շարճում իր արժանավոր
տեղն է գրավում Պալյան ընտանիքը: Մտապն-

րապես հարյուր տարի Պալյան կամ Պալյան
ընտանիքը սերնդից սերունդ է փոխանցել մուսու-
ճարտարապետ-ձևավորողի մասնագիտությունը:
Պալյանները եղել են օսմանյան կայսրության
ժամանակաշրջանի, այսպես կոչված՝ «հասսա»
(արբանի) ճարտարապետներ:

Գրքի հեղինակի կողմից վեր հանված մտ
երկարյա ժամանակահատվածի ճարտարապե-
տությանը հատուկ է հաղափացիական բնույթը
և տիրապետող են բարոյկո ու ամպիր ոճի ձե-
վերը: Բ. Քուրբաչյանը պատկերում է բնկնող
երկու հարյուր տարիների ճարտարապետության
եկրպական (հատկապես ֆրանսիական) շին-
արվեստից ազդված լինելը, Կ. Պոլսի արտա-
ֆուստ եկրպականակար: Գնդարվեստական այս
իրականության մեջ նոր երևույթների արտացո-
լողները եղան Պալյանները: Նրանք հանդես ե-
կան բազմաթիվ նորամուծություններով, արմա-
տապես փոխելով հին Բյուզանդիոնի դեմքը:
Պալյանները Կ. Պոլսում կառուցեցին մի ճեղք
թաղամաս, արբանի պալատներ, մզկիթներ,
բաղնիքներ, գործարաններ, գորանոցներ, աշ-
տարաններ, շրթմքեր և այլն: Նախկինում փայ-
տաշեն նրդնկված կառույցների տեղում Պալյան-
ները կերտեցին ամուր, փարթ շենքեր: Նրանց
հետ է կապվում նաև գաճազան ճուշարմանների
բարեկարգումն ու բարենորոգումը:

Պալյանների կյանքի ու գործունեության ժա-
մանակը համընկնում է սուլթաններ Մուստաֆա
Յ-րդի, Արզուլ Համիդ 1-ինի, Մուստաֆա 4-րդի,
Մանմուղ 2-րդի, Արզուլ Մեդիդի, Արզուլ Ազիզի,
Մուրադ 5-րդի և Արզուլ Համիդ 2-րդի գաճա-
կալության մուշյ շրջանին: Իրենց ստեղծագոր-
ծությունների համար, նրանք գաճազան արտա-
նություններ, պարզներ, շխաններ են ստա-
ցել օսմանյան պետության ղեկավարներից: Այդ
մասին գողափար ենք կազմում Պալյաններին
ուրված հրամաններից, պատվոգրերից ու արտա-
նագրերից, որոնք ներկայացված են գրքի վեր-
ջում, առանձին հատվածով:

Քուրբաչյանի գրում առանձին գլուխներով